

Առանց ջու ճուկըն չ'ապրիլ, լօք ջըրին կտորոլն անիծած:

Ի Դ .

Գիշերս ես ի քուն էի, իմ սրտիս ականջն էր ի բաց:

Սիրու հաւն ի ձայն եած, լօք լըսեց սրտիկս ու դողաց.

Կու թուէր իմ եարին լեզուն ան հաւուն բերանն էր դըրած.

Ո՞վ իմ սրտիս գանգըտին ան հաւուն էր հասկըցուցած:

Ի Ե .

Խիստ անդիշայ եմ ես, կու վախեմ ես անդիշէնէս.

Մանուկ սիրու տէր եմ ես, կու վախեմ հանէն արեւէս.

Երբ զիս արեւէս հանէն, թող հանէն սերն աստընւորէս.

Սերն աստընւորէս հանէն, թող հանէն զաչուիս երեսէս:

Ի Զ .

Սուրաթ ու ճըրագ դըրիր, զիս ի քո լուսըդ ձէնեցիր.

Չէտ ի քո մէջ ծովուն եկի, լօք զարկիր ճըրագն անցուցիր.

Ա՛տ էր քո ամէն ումէտդ , այ հոգեկ, որ ինձ կուտայիր.

Ճըրագդ, ա՛մ, ա՛լ ի՞նչ վառած, երբ բազկիս ուժըն հատուցիր:

Ի Է .

Ո՞ւր էիր, ո՞ւսկից եկիր, անծանօթ, ըզիս սիրեցիր.

Կըրական ի թեզնիքդ ուն'իր, ի ծոցեդ ի վար թափեցիր.

Քո սերդ ալ ոսկի արիր, իմ սրտիս քուրան հալեցիր,

Դարձար զան հալխայ արիր 'ւ իմ սրտիս ականջն անցուցիր:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐԶ

Ա .

Ա՛յ իմ գեղեցիկ պատկեր, որ աչերդ է ծով տէրինտաս,

Այտոր չէն ասեր վատ կըրակ որ մարդու կուտաս.

Այտով դուն ինձի նայէ՛ որ լնամ հետ քեզի հաւաս.

Թէ դու ինձ հաւաս ունիս, ես շինեմ քեզ ոսկի խաֆաս,

Դըռնակն արծըթէն դընեմ որ հոգուս տունն երթաս ու գաս:

Բ .

Մահալօքս ի վար կուգ'ի, նա տեսայ մոմեր դատըլած.

Ի յան մոմերուն տակըն սիրոյ տէր մանուկ մ'եր պառկած.